Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
հոկտեմբերի 1-ի N 1293 - Ա
որոշման

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասով՝

1. Ստեղծել Համաշխարհային բանկի վարկային ֆինանսավորմամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի կառավարման կոմիտե և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Ծրագրի կառավարման կոմիտեն ընդգրկում է ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին՝ պատասխանատու լինելով միջգերատեսչական համակարգման ապահովման, ռազմավարական որոշումների կայացման, ներդրումային ենթածրագրերի հաստատման և ծրագրի իրականացման ընդհանուր վերահսկողության ապահովման համար:

3. Ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում շահառու գերատեսչությունների համագործակցությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև ծրագրի կառավարման կոմիտեին մասնագիտական բնույթի առաջարկություններ ներկայացնելու համար ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի՝ ընդգրկելով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-

ության, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա քաղաքաշինության կոմիտեի, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, «Բիզնես Արմենիա» հիմնադրամի, Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչների և, անհրաժեշտության դեպքում, հրավիրված՝ ծրագրում ընդգրկված համայնքների (ՏԻՄ-երի կողմից լիազորված անձինք, համաձայնությամբ) տեխնիկական ներկայացուցիչներին: Աշխատանքային խմբի ղեկավար է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահը, իսկ աշխատանքային խմբի քարտուղար՝ Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի զբոսաշրջային արդյունքի զարգացման բաժնի ղեկավարը:

Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2016 թ.
դեկտեմբերի 29-ի N 1257 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ

Տ. Ավինյան	- ՀՀ փոխվարչապետ՝ ի պաշտոնե (նախագահ)
Ա. Մինասյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Ս. Պապիկյան	- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Լ. Մակունց	- ՀՀ մշակույթի նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Է. Գրիգորյան	- ՀՀ բնապահպանության նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Ա. Հակոբյան	- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար՝ ի պաշտոնե (անդամ)
Ա. Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ՝ ի պաշտոնե (անդամ)
Ա. Էլոյան	- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ՝ ի պաշտոնե (անդամ)
Հ. Գրիգորյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ՝ ի պաշտոնե (անդամ)
Ա. Կիրակոսյան	- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն՝ ի պաշտոնե (անդամ, համաձայնությամբ)
Ա. Ա. Ավակյան	- «Բիզնես Արմենիա» հիմնադրամի գործադիր տնօրեն՝ ի պաշտոնե (անդամ, համաձայնությամբ)
Ա. Խզմալյան	- Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն՝ ի պաշտոնե (անդամ, համաձայնությամբ):

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2016 թ.
դեկտեմբերի 29-ի N 1257 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հ. Գրիգորյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ (աշխատանքային խմբի ղեկավար)
Տ. Գալստյան	- ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
Ա. Հախումյան	- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Խզմալյան	- Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Արամյան	- ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ
Լ. Հարությունյան	- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ն. Ավետյան	- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տարածքային ներդրումային քաղաքականության և ենթակառուցվածքների զարգացման վարչության պետ
Լ. Ավետիսյան	- ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի վարչության պետ
Մ. Գրիգորյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Բ. Մանուկյան	- «Բիզնես Արմենիա» հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերի մասնագետ (համաձայնությամբ)

Թ. Շահբազյան	- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի համակարգող (համաձայնությամբ)
Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայան	- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Մանասյան	- Հայաստանի զբոսաշրջության զարգացման հիմնադրամի զբոսաշրջային արդյունքի զարգացման բաժնի ղեկավար (աշխատանքային խմբի քարտուղար):»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ